«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ կողմից Թիվ ԼՎ-183 Լեռնահատկացման ակտով սահմանված տարածքում (Կապան համայնք նախկին Շահումյան բանավան) 2020թ-ին տեղի ունեցած փլուզման հետևանքների վերացման (ռեկուլտիվացիայի) միջոցառումների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 3-րդ հանրային քննարկման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

29.03.2024թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի մշակույթի կենտրոնի շենքում 2024 թվականի մարտի 22-ին, ժամը 15:00-ին տեղի ունեցավ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ կողմից Թիվ ԼՎ-183 Լեռնահատկացման ակտով սահմանված տարածքում (Կապան համայնք նախկին Շահումյան բանավան) 2020թ-ին տեղի ունեցած փլուզման հետևանքների վերացման (ռեկուլտիվացիայի) միջոցառումների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 3-րդ հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ բնապահպանության բաժնի մենեջեր՝ Աիդա Ալեքսանյանը, հանրային կապերի մենեջեր՝ Արփինե Հարությունյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ այլ աշխատակիցներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Անդրանիկ Հովակիմյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի 2024 թվականի մարտի 12-ի թիվ 044 (7045) համարում, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի /kapan.am/ հայտարարություններ բաժնում: Հանրային քննարկման վերաբերյալ դիտողություններ կամ առաջարկություններ չեն ստացվել:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ բնապահպանության բաժնի մենեջեր՝ Աիդա Ալեքսանյանին:

Զեկույց (Աիդա Ալեքսանյան) - Հարգելի հանրային քննարկման մասնակիցներ նախատեսվող գործունեության վայրը ինչպես նշվեց՝ գտնվում է ընկերության լեռնահատկացման սահմանների մեջ, նախկին Շահումյան-Բանավան բնակավայրից մոտ 1-1,2 կմ հեռավորության վրա: Գործունեությունը ենթադրում է ռելիեֆի վերականգնում: Այսինքն՝ նախկինում, դեռևս ԽՍՀՄ տարիներին շահագործվող տարածքում տեղի է ունեցել փլուզում և նախատեսվող գործունեությունը ենթադրում է փլուզման լցոնում և ռեկուլտիվացում: Դրա միջոցով ռելիեֆի վերականգնում է իրականացվելու:

Նախատեսվող գործունեությունը, ինչպես նշեցի երկու փուլով է տեղի ունենալու: Առաջին փուլում՝ փլվածքի լցոնումը տեղի է ունենալու մակերևույթից: Լցոնվելու է դատարկ ապարով, որը բերվելու է ընկերության դատարկ ապարի պահեստարանից: Այն գտնվում է փլուզման տարածքից ոչ շատ հեռու, մոտավորապես 1,5 կմ հեռավորության վրա: Դատարկ ապարի քանակությունը կազմելու է 6700 մետր խորանարդ: Այնուհետև որոշ ժամանակ սպասելուց հետո, երբ արձանագրվելու է կայունություն, անհրաժեշտության դեպքում եթե նկատվի շարժ ևս դատարկությունները լցոնվելու են, ստաբիլությունը հասնելուց հետո: Հաջորդ փուլը տեխնիկական ռեկուլտիվացման փուլն է լինելու, որի դեպքում 1-2 մ կավի շերտ է լցվելու, տոփանվելու է: Այն հիդրոմեկուսից ֆունկցիա է կատարելու և թույլ չի տալու, որպեսզի մակերևույթային և հիմնական տեղումները ներթափանցեն ստորին հորիզոններ: Շերտի կայունությունից հետո բուսահողային շերտ է լցվելու և իրականացվելու է ցանքս:

Ցանքսը իրականացվելու է տեղական բուսատեսակներով՝ սիզախոտով, որի նպատակը հիմնականում կայանում է նրանում, որ նախ՝ տեղական բուսատեսակ է, երկրորդը՝ ունի ոչ շատ խորը արմատային համակարգ, ինչը հետագայում թույլ կտա որպես արոտավայր տարածքը օգտագործել: Նախատեսվող գործունեության հիմնական նպատակը ռելիեֆի վերականգնումն է, անվտանգության ապահովումն է:

Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման հաշվետվության մեջ մանրամասն վերլուծված է այն բոլոր խնդիրները, որոնք կարող են առաջանալ շրջակա միջավայրի ազդեցության տեսանկյունից:

Մթնոլորտային օդի առումով գործունեությունն այնպիսին է, որ բոլոր արտանետումները գտնվում են սահմանային թույլատրելի նորմատիվների մեջ:

Շրջակա միջավայր ջրի արտանետում չի նախատեսվում: Ջուրը օգտագործվելու է միայն փոշու արտանետումը կանխելու համար, որպես ջրցանի օգտագործում, որը հաշվարկված է այն քանակությամբ, որը միայն ներծծվելու է մակերևույթին և կատարելու է իր փոշենստեցման ֆունկցիան: Ավելորդ հոսքեր և առավել ևս մակերևութային ջրային ավազան չի նախատեսվում:

Կենսաբազմազանության տեսանկյունից տարածքում նախատեսվող գործունության կարմիր գրքային բուսատեսակներ չկան, բացի դրանից նաև հնարավոր հավանական ազդեցությունը կանխելու նպատակով շինարարական աշխատանքների գործունեությունը նախատեսվում է միջհանդային ճանապարհների օգտագործմամբ: Այսինքն՝ նոր ճանապարհներ չի բացվելու, ինչ ենթադրում է, որ հավանական ազդեցությունը հասցված է նվազագույնի:

Թափոնների կառավարման տեսանկյունից հիմնական թափոնները, որոնք հավանական է, որ կարող են առաջանալ գործունեության ընթացքում, դա՝ կենցաղային թափոններն են, զուտ մարդկանց կենսագործունեության տեսանկյունից: Տեղադրվելու են համապատասխան աղբամաններ և ընկերությունում գործող պայմանագրի համաձայան՝ կենցաղային թափոնները տեղափոխվելու են Կոմունալ ծառայության միջոցով, իսկ մեքենաների սպասարկման արդյունքում առաջացող յուղոտված լաթերը, յուղի մնացորդներրը և այլն նախատեսվող գործունեության տարածքում որպես այդպիսին չեն առաջանալու, որովհետև նախատեսվում է, որ ավտոմեքենաների սպասարկումը իրականացվելու է կա՛մ ընկերության ներսի տարածքում, կա՛մ քաղաքի ավտոմեքենաների սպասարկամ վայրերում:

Թերևս այդքանը: Շնորհակալություն ուշադրության համար:

Ամփոփում (Անդրանիկ Հովակիմյան)- Շնորհակալություն: Կա՞ն հարցեր հարգելի գործընկերներ:

Տեղեկացնեմ, որ համաձայն ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման հանրային ծանուցման և քննարկումների ընթացակարգի 15-րդ կետի՝ վերը նշված հանրային քննարկման վերաբերյալ Ձեր դիտողություններն ու առաջարկությունները կարող եք ներկայացնել, ծանուցումից հետո 18 աշխատանքային օրվա ընթացքում: Առաջարկություններ լինելու դեպքում հաշվի կառնենք հաջորդ հանրային քննարկման ժամանակ: Հանրային

քննարկումը համարենք ավարտված: Շնորհակալություն եմ հայտնում բոլորին մասնակցության համար:

Հանրային քննարկման պատասխանատու՝

Կապան համայնքի ղեկավար **Գևորգ Փարսյան**

Ձեռնարկող՝

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ

գլխավոր տնօրեն **Սասուն Ավետիսյան**

Հանրային քննարկման վարող՝

Կապանի համայնքապետարանի գյուղ. և բնապահ.

բաժնի պետ **Անդրանիկ Հովակիմյան**

Հանրային քննարկման արձանագրող՝

Կապանի համայնքապետարանի

գյուղ. և բնապահ. բաժնի առաջատար մասնագետ **Աստղիկ Մկրտչյան**